Հիմնավորում

Մասիս համայնքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 26-ի «2025 թվականի բյուջեն հաստատելու մասին թիվ 370-Ն որոշմանը կից 2-րդ, 3-րդ և 4-րդ հավելվածներում փոփոխություններ կատարելու մասին» որոշման ընդունման

1. **Մասիս համայնքի 2025 թվականի բյուջեում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը**

Մասիս համայնքի 2025 թվականի բյուջեի ծախսային մասի փոփոխությունը պայմանավորված է հետևյալ խնդիրներին լուծում տալու անհրաժեշտությամբ:

Առկա խնդիրների նկարագրությունը

Մասիս համայնքը հանդիսանալով «Հայաստանի համայնքների միություն» հասարակական կազմակերպության անդամ, յուրաքանչյուր տարի վճարում է Միությանն անդամակցելու անդամավճարը՝ մեկ բնակչի հաշվով սահմանված 10 դրամ: Միության Ընդհանուր ժողովի կողմից անդամավճարի չափը 2025 թվականի համար սահմանվել է մեկ բնակչի հաշվով 20 դրամ, հետևաբար բյուջեում նախատեսված միջոցներին անհրաժեշտ է ավելացնել 960,0 հազար դրամ՝ տարեկան անդամավճարն ամբողջությամբ վճարելու համար:

Մասիսի համայնքապետարանը մշտապես համագործակցելով համայնքում գործող հասարակական կազմակերպությունների հետ, իրականացնում է բազմաբնույթ ծրագրեր: Ծրագրերի իրականացմանն աջակցելու համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 4 450,0 հազար դրամ:

Նախորդ տարի ձեռք բերված նախագծանախահաշվային փաստաթղթերով կապիտալ աշխատանքներ իրականացնելու համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել"

- Մարմարաշեն բնակավայրի կամրջից եկեղեցի տանող ճանապարհահատվածում մայթի կառուցման աշխատանքների համար՝ 15 825,0 հազար դրամ
- Մասիս քաղաք 3-րդ թ/մ թիվ 14 և 18 շենքերի հարակից ճանապարհահատվածում մայթի կառուցման աշխատանքների համար՝ 7 600,0 հազար դրամ
- Մասիս քաղաքի Հերացի փողոցի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների համար՝ 8 771,0 հազար դրամ
- Ջրահովիտ բնակավայրի գերեզմաններ տանող ճանապարհի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքների համար՝ 2 335,0 հազար դրամ
- Մասիս քաղաքի Առնո Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոցի պատուհանների փոխարինման աշխատանքների համար՝ 6 084,0 հազար դրամ:

2023 թվականին մեկնարկած սուբվենցիոն ծրագրերով իրականացվող ասֆալտապատման և բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքներում առաջացել են լրացուցիչ աշխատանքների ծավալ, որի համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել ֆինանսական միջոցներ հետևյալ բաշխմամբ"

- Մասիս համայնքի փողոցների ասֆալտապատման՝ հիմնանորոգման աշխատանքների համար՝ 27 644,3 հազար դրամ
- Մասիս քաղաքի բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքների համար՝ 1 681,7 հազար դրամ:

Սայաթ Նովա բնակավայրի հիմնանորոգված մշակութի տանն անհրաժեշտ է տեղադրել հակահրդեհային ազդարարման համակարգ, որի համար բյուջեում անհրաժեշտ է նախատեսել 936,0 հազար դրամ:

Համայնքապետարանի 4-րդ հարկի խորհրդակցությունների նոր հիմնանորոգված սենյակը կահավորելու համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 4 560,0 հազար դրամ:

2025-2026թթ սուբվենցիոն ծրագրերում ընդգրկված որոշակի նախագծանախահաշվային փաստաթղթեր՝ համաձայն միջգերատեսչական հանձնաժողովի ոլորտային գերատեսչության, անհրաժեշտ է ենթարկել վերանախագծման և վերահաշվարկի խորհրդատվական ծառայությունների՝ ներառյալ քաղաքաշինական պարզ փորձաքննությունը, հետևաբար բյուջեում անհրաժեշտ է նախատեսել ընդհանուր 9 210,0 հազար դրամ գումար՝ նախահաշվային արժեքով:

Դարբնիկ բնակավայրում արցախյան պատերազմի հերոս Ժորա Եսայանի անվան փողոցում առկա է 980 քմ համայնքային տարածք, որը բազմաթիվ բնակիչների, ինչպես նաև Ժորա Եսայանի հարազատների ցանկությամբ առաջարկվում է բարեկարգել որպես այգի և անվանակոչել հերոսի անվամբ: Այգին կառուցելու համար անհրաժեշտ է ձեռք բերել փորձաքննություն անցած նախագծանախահաշվային աշխատանքների փաթեթ, որի համար անհրաժեշտ է բյուջեում նախատեսել 440,0 հազար դրամ:

Նորաբաց բնակավայրը չունի վարչական նստավայր, բնակավայրում գործող մանկապարտեզում սենյակ է հատկացվել վարչական ղեկավարի համար: Առաջարկվում է բնակավայրում թեթև կոնստրուկցիաներով վարչական շենք կառուցելու համար ձեռք բերել պարզ փորձաքննություն անցած նախագծանախահաշվային աշխատանքներ, որի համար բյուջեում անհրաժեշտ է նախատեսել 2 200,0 հազար դրամ:

Մասիսի համայնքապետարանի շենքին հարակից տարածքում վարչական շենքի, պահեստի կառուցման և տարածքի բարեկարգման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների համար մի քանի անգամ հայտարարվել է գնման ընթացակարգով գործընթաց, որը չի կայացել ցածր գնի պատճառով: Առաջարկվում է բյուջեում նախատեսված միջոցներին ավելացնել ևս 2 500,0 հազար դրամ վերը նշված ծառայությունը ձեռք բերելու համար:

ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտն ընդունելու դեպքում համայնքի բյուջեի եկամուտների և ծախսերի նվազեցումների և ավելացումների

Հազար դրամ

h/h	բաժին	խումբ	դաս	Գործառական դասակարգում, նպատակ	հոդված	Վարչական մասի Ծախսեր	Ֆոնդային մասի Ծախսեր	Ֆոնդային մասի Մուտքեր
				Ծախսեր				
1	**01**	**1**	**1**	**Օրենսդիր և գործադիր մարմիններ.** Վարչական սարքավորումներ	5122		4 560,0	
2				Նորաբաց բնակավայրում թեթև կոնստրուկցիաներով վարչական նստավայրի կառուցման նախագծանախահաշվային աշխատանքներ	5134		2000,0	
3				փորձաքննություն	5134		200,0	
4				Համայնքապետարանի վարչական շենքի հարակից տարածքում վարչական մ/շ և պահեստի կառուցման, տարածքի բարեկարգման նախագծանախահաշվային աշխատանքներ	5134		2300,0	
5				փորձաքննություն	5134		200,0	
6	**01**	**6**	**1**	**Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ.** Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	4239	-5410,0		
7				Նվիրատվություն հասարակական կազմակերպություններին	4819	5410,0		
8				Վարչական սարքավորումներ	5122		-89 787,0	
9	**04**	**2**	**4**	**Ոռոգում.** Մասիս համայնքի ոռոգման համակարգերի կառուցման և նորոգման նախագծանախահաշվային փաստաթղթերի վերանախագծում և վերահաշվարկում	5134		870,0	
10				փորձաքննություն	5134		90,0	
11	**04**	**5**	**1**	**Ճանապարհային տրանսպորտ.** Մարմարաշեն բնակավայրի կամրջից եկեղեցի տանող ճանապարհահատվածում մայթի կառուցման աշխատանքներ	5112		15 825,0	
12				Մասիս քաղաք 3-րդ թ/մ թիվ 14 և 18 շենքերի հարակից ճանապարհահատվածում մայթի կառուցման աշխատանքներ	5112		7 600,0	
13				Մասիս համայնքում փողոցների ասֆալտապատման աշխատանքներ	5113		27 644,3	
14				Մասիս համայնքի փողոցների ասֆալտապատման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերի վերանախագծում և վերահաշվարկում	5134		7 500,0	
15				փորձաքննություն	5134		750,0	

16	**06**	**1**	**1**	**Բնակարանային շինարարություն.** Բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքներ	5113		1681,7	
17	**06**	**4**	**1**	**Փողոցների լուսավորում.** Մասիս քաղաքի Հերացի փողոցի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ	5112		8 771,0	
18				Ջրահովիտ բնակավայրի գերեզմաններ տանող ճանապարհի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքներ	5112		2 335,0	
19	**08**	**1**	**1**	**Հանգստի և սպորտի ծառայություններ.** Դարբնիկ բնակավայրում այգու բարեկարգման նախագծանախահաշվային աշխատանքներ	5134		400,0	
20				փորձաքննություն	5134		40,0	
21	**08**	**2**	**3**	**Մշակույթի տներ.** Հակահրդեհային ազդարարման համակարգ /Սայաթ Նովա բնակավայրի մշակույթի տուն/	5129		936,0	
22	**09**	**5**	**1**	**Արտադպրոցական դաստիարակություն.** Մասիս քաղաքի Ա. Բաբաջանյանի անվան երաժշտական դպրոցի պատուհանների փոխարինում	5113		6 084,0	
				Ընդամենը		***0,00***	***0,0***	***0,0***

Փոփոխությունների արդյունքում բյուջեի վարչական և ֆոնդային մասերում ծախսերի ավելացում կամ նվազեցում չի լինի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ՝ Ա. ԿՈՍՏԱՆՅԱՆ